



Փաստ. անվանումը	Բողոքների քննարկման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ՕՍ-01-01
Հաստատման ամսաթիվը	12/12/2014
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Անուն/Ազգանուն/ Պաշտոն	Սուրեն Օհանյան
Ստորագրություն	



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն

ԿԱՐԳ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Եվրասիա միջազգային համալսարանը /այսուհետ՝ Համալսարան/ սույն կարգով սահմանում և լուծում է Համալսարանի ուսանողների կողմից բողոքների ներկայացման, դրանց քննարկման և լուծման կարգը:
- 1.2. Համալսարանը սույն կարգով սահմանված խնդիրների լուծումը իրականացնում է ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության հիման վրա:

2. Գնահատականների բողոքարկումը.

- 2.1. Ուսանողն իրավունք ունի բողոքարկել գրավոր աշխատանքի գնահատականը գրավոր, աշխատանքի անցկացումից 10 օրվա ընթացքում՝ տեղեկացվելուց և աշխատանքի արդյունքը քննարկելուց հետո:
- 2.2. Բողոքարկման դեպքում ուսանողը լրացնում է և ֆակուլտետի դեկանին է ներկայացնում բողոքարկման թերթիկը:
- 2.3. Դեկանը բողոքարկման թերթիկը ուղարկվում է ամբիոն՝ քննարկման համար:
- 2.4. Բողոքարկված տետրն անցնում է քննարկման հետևյալ փուլերը.
 - 2.4.1. վերանայում և վերագնահատում ամբիոնում՝ ռեկտորատի հաստատած հանձնաժողովի կողմից,
 - 2.4.2. հանձնաժողովի գրավոր կարծիքի ներկայացումը, քննարկումը և հիմնավորումը ուսանողի հետ, ամբիոնի վարիչի մասնակցությամբ /ամբիոնում/,
- 2.5. Բողոքարկված տետրը ռեկտորատի որոշմամբ կարող է ուղարկվել վերագնահատման երկրորդ անգամ:
- 2.6. Քննարկման գործընթացը ամբիոնում պետք է իրականացվի բողոքարկման պահից սկսած 2 օրվա ընթացքում:
- 2.7. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականը հաստատվում է բողոքարկման ամբիոնային հանձնաժողովի անդամների ստորագրությամբ:
- 2.8. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականն արձանագրվում է դեկանատի կողմից տրված ուղեգրում:
- 2.9. Բողոքարկման արդյունքում գնահատականը կարող է նաև իջեցվել:

3. Ուսանողների այլ բողոքների քննարկումը.

- 3.1. Ցանկացած այլ հարցով /տեխնիկական, պրոֆեսորադասախոսական կազմի/ ուսանողների կողմից բողոքներ լինելու դեպքում դրանք քննվում են Համալսարանի դեկավար կազմի կողմից, ըստ պաշտոնի աստիճանային հերթականության:
- 3.2. Համալսարանի ուսանողների այլ բողոքները /որոնք գնահատականներին վերաբերում չեն/ առաջին անգամ քննվում են ամբիոնում:
- 3.3. Այն դեպքում երբ ուսանողը չի համաձայնվում բերված բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ, իրավունք ունի այն բողոքարկել դեկանին:
- 3.4. Դեկանի կողմից կայացված որոշումները բողոքարկման ենթակա են պրոռեկտորին կամ ռեկտորին: Ռեկտորի կողմից կայացված որոշումները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով: